ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

------- 2023 թվականի №-Ա

«ԿԷՐՕՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1-ին հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «ԿԷՐՕՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի հոկտեմբերի 17-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «ԿԷՐՕՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և Երևան քաղաքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրել 157.900ՄՀց/152.900ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2033 թվականի ----ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «ԿԷՐՕՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Երևան քաղաքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրվող 157.900ՄՀց/152.900ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախակա-

նությունների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «ԿԷՐՕՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում №900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի -----ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք.Երևան
------ 2023թ.